№ 50 Մարտի 26 (Ապրիլի 7) 1880 Մարտի 26 (Ապրիլի 7) № 50

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ"

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տան օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածմունքներ։—Ներքին տեսութիւն։ Նամակ Ղուբայից։ Ներքին լուրեր։ Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա։ Ռումելիա։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Թատրոնական մանաժողովի հաշիւը։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐԸ

—

«Մշակի» ներկայ համարում ընթերցողը կը կարդայ Միջազգային ընկերութեան Լօնդօնից մեզ հաղորդված հեռագիրը, որ անգլիական պարլամենտի ընտրութիւնների մէջ յաղթող է հանդիսանում ազատամիտ կուսակցութիւնը։ Ուրեմն յոյս կայ որ պահպանողական կուսակցութիւնը շուտով ընկնելու է և այժմեան կառավարութիւնը Անգլիայում կը փոխվի։

Մեր կարծիքով ամեն կողմից առիթ կայ ուրախանալու որ Անգլիայում կատարվելու է այդ տեսակ յանկարծակի փոփոխութիւն։

Մենք չենք խօսի այն բանի վրա թէ ինչ փոփոխութիւններ կարող է առաջ բերել Անգլիայի ազատամիտ կուսակցութեան յաղթութիւնը եւրոպական պետութիւնների միմեանց հետ ունեցած քաղաքական յարաբերութիւնների մէջ. երևի ազատամիտ կուսակցութիւնը աւելի բարեկամաբար կը վերաբերվի դէպի Ռուսաստանը։ Լրագիրներից շատերը կարծում են որ անգլիական ազատամիտ կուսակցութեան յաղթող հանդիսանալը շատ յաճելի չի լինի Գերմանիային։ Ձենք խօսի այն բանի մասին թէ նոյն իսկ Անգլիայի մի քանի ներքին հարցերի վճռվելու վրա Ռիկօնսֆիլդի անկումն մեծ ազդեցութիւն կունենայ։ Օրինակ Իրլանդիայի խնդիրը, երևի, մի որոշ և իրլանդացիների համար ցանկալի լուծումն կը ստանայ։

Բայց մեզ ամենից շատ պէտք է հետաքրքրի այն դիրքը, որ կը բռնի Անգլիան արևելեան խնդրի վերաբերութեամբ և մանաւանդ ի՞նչպէս կը նայի նա Թիւրքաց Հայերի վրա։

Յայտնի է որ ազատամիտ կուսակցութիւնն էր, որ անդադար անում էր համակրական ցոյցեր արևելեան քրիստոնեաների վերաբերութեամբ. Թիւրքիահպատակ սլավեաններին, բոլգարներին և հայերին համակրող միտինգներ կազմողը Անգլիայում ազատամիտ կուսակցութիւնն էր։ Գլադստոնի համակրութիւնը դէպի արևելեան քրիստոնեաները յայտնի է։

Ուրիշ կողմից յայտնի է որ անգլիական ազատամիտ կուսակցութիւնը, երբ նա պետութեան ղեկը իր ձեռքն է առնում, երբէք չէ հետևում այն ներգործական, արտաքին ամեն հարցերի մէջ խառնվող քաղաքականութեանը, ինչպէս պահպանողական կուսակցութիւնը։

Եթէ ազատական կառավարութիւնը Անգլիայում ոչինչ չանի էլ Թիւրքաց հայերի վիճակը թեթևացնելու համար, այնու ամենայնիւ նա այն վնասը չի տայ Թիւրքահպատակ հայերին, ինչ վնասը տուած է Թիւրքիայի հայերին Ռիկօնսֆիլդի կառավարութիւնը։ Ռերլինի կոնգրէսից յետոյ Անգլիան մենակ յանձն առաւ հոգալ Թիւրքիայի մէջ իրագործելի բարեզարգացումների վրա։ Բայց ինչ արաւ Անգլիան երկու տարվայ ընթացքում... Ոչինչ կամ մինչև անգամ ահագին վնասներ տուեց խեղճ հայերին։ Հարկերի ծանրութեան աճելը, ֆինանսական ընդհանուր ճգնաժամը, քուրդերի կատաղութիւնը, վերջապէս սովը,—ահա անգլիական հովանաւորութեան հետևանքը։

Եւ չը պէտք է մոռանալ, որ այս տեսակ դրութեան մէջ Թիւրքիայի հայերը գրեթէ հնար չունեն բողոքել ամբողջ Եւրոպային, որովհետև եւրոպական պետութիւնները իրապէս Անգլիայի խնամքին են յանձնել Թիւրքիայի վրա հսկելը, ուրեմն իրանք իրանց վրայից վերցնելով պատասխանատուութիւնը, Անգլիայի վրա են դրել Թիւրքիային բարեզարգելու պատասխանատուութիւնը։

Այն ինչ, եթէ Անգլիան այլ ևս անմիջապէս չի խառնվի Թիւրքիայի գործերի մէջ, մենակ չի հովանաւորվի այդ երկիրը,—հայերը միշտ միջոց կունենան բողոքել ամբողջ Եւրոպային և կախված չեն լինի միմիայն Անգլիայից։

Բացի սորանից, Բ. Դուռը այն պատճառով իրան ուժեղ է զգում, որ ունի Անգլիայի պէս մի զօրեղ պաշտպան։ Իսկ եթէ Թիւրքաց կառավարութիւնը կը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

—

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆԻ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՇԻՒԸ

—

Մարտի 6-ին, արհեստաւորների կլուբի դահլիճում տեղի ունեցաւ հայոց թատրոնի հիմնադիրների ընդհանուր ժողովը. Ներկայ էին 22 անձինք միայն. տեղական մամուլի ներկայացուցիչները հրաւիրված չէին, և ոչ նախապէս հրատարակված էր ժողովի որ օր լինելը։

Այդ ժողովի մէջ թատրոնական մանաժողովի անդամները ներկայացրին իրանց տարեկան գործունէութեան հաշիւը։ Հաշիւից երևում է, որ մանաժողովը 30 ներկայացումից մուտք է ունեցել 14,974 ռուբլի, բայց ծախսել է 16,981 ռուբլի։ Ուրեմն մուտքից աւել է ծախսել, այսինքն՝ վնաս է կրել 2007 ռուբլի։

Այդի առաջ ունենալով այն հանգամանքը, թէ որպիսի ոգեորութեամբ մեր հասարակութիւնը լեցնում էր թատրոնի դահլիճը, այդի առաջ ունենալով ներկայացումների լիուլի մուտքերը,—մենք սպասում էինք, որ մանաժողովը իր առաջին սեզոնի մէջ ոչ միայն դեֆիցիտ չի ունենայ, այլ մի նշանաւոր գումար ևս կաւելացնէ թատրոնի գոյութիւնը պահպանելու համար սկզբում հաւաքված հիմնական դրամագլխի վրա։ Բայց այդ ակնկալութիւնները խաբեցին մեզ։ Մանաժողովը, որպէս երևում է, իր գործը այն աստիճան անհոգի և անկարգ կերպով է տարել, որ փոխանակ չանելու, վնասվել է։

Ցիչեալ ենթադրութիւնը աւելի չոչափելի կացուցանելու համար, մենք հարկաւոր ենք համարում մի առ մի մէջ բերել մանաժողովի արած ծախսերը, որոնց մէջ նկատվում են հրէշաւոր չռայլութիւններ և անխնայ վատնումներ։

1. Պոլսից երկու դերասանուհի և մի դերասան հրաւիրելու առիթով նրանց և պ. Զմշկեանի ճանապարհածախքը եղել է 1225 ր.։ 2. Պ. Զմշկեանը Պոլիս գնալու համար առանձին վարձատրութիւն է ստացել 394 ր. 76 կ.։ 3. Մինչև ներկայացումների սկսվելը պոլսեցի դերասանուհիները և դերասանը Թիֆլիսում ծախսել են 800 ռուբլի։ 4. Օր. օր. Աստղիկի, Սիրանուշի և տ. Զըմշկեանի համար չորեր են կարել տուած նրանց բենեֆիսի առիթով 450 ր.։ 5. Պոլսում գնած բեկերտուարի համար վճարած է 200 ր.։ 6. Թիֆլիսում գնած թատրոնական գրուածքների համար 28 ր. 45 կ.։ 7. Պիեսաներ և դերեր արտագրելու համար վճարած է 502 ր. 70 կ.։ 8. Զանազան անանուն ծախքեր են եղած 1035 ր. 35 կ.։ 9. Դերասանական խմբին առձիկ 6345 ր.։ 10. Պ. Պալմին թատրոնի վարձ 6000 ր.։ Ընդամենը 16, 981 ր. 26 կ.։

Ցիչեալ գումարից, ի բաց առնելով 6345 ր., որ վճարված է դերասաններին որպէս առձիկ, մնացած 10,636 ր. մենք համարում ենք բոլորովին աւելորդ, և չռայլութիւնից առաջ եկած, աննրելի ծախքեր։ Ահա ինչ մտքով։

Պոլսից երկու դերասանուհի և մի դերասան հրաւիրելու, Թիֆլիս բերելու, և մինչև ներկայացումների սկսվելը պահելու համար ծախսվել է 2420 ր.։ Դա չռայլութիւն չէ։ Մինչդեռ նրանց կարելի էր բերել տալ կամ 3 ռուբլինոց մի հեռագրով և կամ 7 կոպէկանոց մի նամակով։ Բերված դերասանուհիները կամ դերասանը այնքան հաղուստներ չունեն տարածներ չէին, որ հարկաւոր լինէր նրանց հրաւիրելու համար առանձին հրաւիրակ ուղարկել և հազարներ ծախսել։ Պոլսի մէջ նրանց նմանները այնքան շատ են, որ ամսական 100—150 ռուբլի առձիկների անունը լսածին պէս, իրանք վազ կը տային և կը գային։ Նոյն իսկ այժմեան թատրոնի հանձարը, թագն ու պարծանքը, պ. Ադամեանը, մի քանի տարի առաջ վարձված էր Նոր-Նախիջևանում, որպէս լսել ենք, ամսական 25 ռուբլիով։ և նրա ամբողջ պոլսեցի խումբը, որ աւելի ընտիր անձինքներից էին կազմված քան այժմեանները, նոյն առձիկ էին ստանում. և նոր նախիջևանցիք նրանց հրաւիրելու համար ոչ ոքի չէին ուղարկել, նրանք իրանց ոտով էին եկել Պոլսից։

Օր. օր. Աստղիկի, Սիրանուշի և տ. Զմշկեանի համար չորեր է կարվել նրանց բենեֆիսի առիթով 450 ռուբլու։ Դա չռայլութիւն չէ։ Դերասանուհիները, որոնք բենեֆիսներից հազարներ էին ստանում, իրանք կարող էին հոգ տանել իրանց չորերի մասին, մանաժողովը պարտաւոր չէր նրանց զուգելու և զարդարելու համար աւելորդ ծախքեր անել։

Զանազան անանուն ծախքեր է եղած 1035 ր.։ Այդ անանուն ծախքերի մէջ են մտնում, երևի այն ընծաները, որոնց մանաժողովը առատօրէն թափում էր մի քանի ընտրեալ դերասանուհիների և դերասանների վրա, որոնց մէջ առաջին տեղը բռնում էին պոլսեցիները։ Մենք ընդդէմ չէինք լինի, եթէ մանաժողովը իր ձեռքի տակ ունեցած «տաղանդները» աւելի խրախուսելու համար՝ նրանց կը յարգէր որ և իցէ պարգևով։ Բայց այդպիսի առատաձեռնութիւն անում են այն ժամանակ միայն, երբ մէջտեղում վաստակ կայ և ոչ թէ դեֆիցիտ։

Ամենաանչան ծախքը, որ պէտք է ամենագլխաւոր տեղը բռնէր բոլոր ծախքերի մէջ, գործ է դրվել թատրոնի բեկերտուարի վրա։ Դերասանուհիների լաթերի, գեղեցիկ ընծաների, Պոլսի ճանապարհորդութեան և զանազան անանուն չռայլութիւնների վրա 3905 ռուբլի ծախսող մասնաժողովը, Թիֆլիսում թատրոնական գրուածքներ է գնել 28 ր. 45 կոպէկի (չը գիտենք այդ գնով ինչ գրուածքներ կարելի էր գնել), իսկ Պոլսում 200 ռուբլու։ Այդ կէտի մէջ մենք համարում ենք թատրոնական մանաժողովին ոչ միայն իր յանձն առած պարտաւորութիւնների մէջ անընդունակ, այլ մինչև անգամ անարեխիղճ։ Նա լաթերի, զարդարանքների, ընծաների և այս ու այն պարոնի քեֆերի համար հազարներ է ծախսում, իսկ բեկերտուարը հարստացնելու վերաբերութեամբ, որի մէջն է կայանում գործի ամբողջ հոգին և նրա նշանակութիւնը,—մնում է անհոգ։

Մենք բոլորովին օգտաւէտ և նպատակայարմար կը համարէինք, եթէ մանաժողովը փոխանակ վերոյիշեալ անկարգ ծախքերի, մի քանի հազար ռուբլի գործ կը դնէր թատրոնի ողորմելի բեկերտուարը հարստացնելու համար, և իր ընտրողութեամբ պիեսաներ թարգմանել կամ փոխադրել կը տար, և կամ լաւ պրեմիաներ նշանակելով, կը յորդորէր ձեռնտաս գրողներին նոր պիեսաներ ստեղծելու։—Ահա այդ համարում ենք մենք մի հարստութիւն, որի վրա ծախսված փողը միայն «երեսպաթական վնաս» կարելի է համարել, և ոչ Աստղիկի կամ Սիրանուշի լաթերի և ընծաների ծախքերը, որպէս աշխատում է մեզ հաւատացնել իշխ. Ամատունին։

Խօսելով Պոլսից բերած 200 ռուբլինոց բեկերտուարի գեղարուեստական և կրթողական նշա-

կորցնի Անգլիայի պաշտպանութիւնը և հովանաւորութիւնը,— նա իրան թոյլ կը զգայ և այդքան յանդուգն չի վարվի իր հպատակ քրիստոնեաների հետ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՅԻՑ

—

փետրվարի 28

Ցեղիս հոգևոր-ազգային զպրոցը ունի փոքրիկ մայր գումար, մօտաւորապէս 2800 բուբլի։ Այս գումարը պահվում էր հոգաբարձական ձանձապահի մօտ՝ որը բարեխղճաբար և ազգասիրութեամբ!! է վարվում—այսինքն նշանակում է տոկոս իր կամքի համեմատ։ Բացի սրանից զպրոցը ստանում է մասնաւոր նուէրներ և ունի մի քանի հասոյթներ վ ե հ ա փ ա ռ ի ց յատկացրած, այնու ամենայնիւ զպրոցը մի քանի ժամանակ դադարեց գոյութիւնից, ինչպէս ասում են, մի կողմից տոկոսի սղութիւնը, միւս կողմից նուէրների և հասոյթի անհաստատութիւնը արգելք եղան զպրոցի գոյութեան, բայց մի քանի ամսից յետոյ ժողովրդեան յուզմունքից ստիպված ոտքի կանգնեց զպրոցը և մինչև այժմ էլ չարունակվում է (այս մասին մի ուրիշ անգամ)։ Այսպիսի մի ժամանակ, երբ զպրոցը մեծ կարօտութիւն ունէր զրամական օժանդակութեան, մէկը հոգաբարձուներից ներկայացրեց փետրվարի 3-ին հոգաբարձական ժողովին մի յայտարարութիւն, որի մէջ համառօտ կերպով յիշելով հոգաբարձութեանը զպրոցի այժմեան նիւթական աննախանձելի դրութիւնը, խնդրում էր 'ի միասին աշխատել զպրոցի յառաջադիմութեան և բարեկարգութեան համար, և մէջ էր բերում ձանձապետի ձանձան զեղծումները։ Յայտարարութիւն ներկայացնող պ. հոգաբարձուն վերջում յօժարութիւն յայտնեց, որ եթէ մինչև փետրվարի 15-ն առձեռն պատրաստ կը լինի զպրոցական մայր գումարն, ինքն պատրաստ է գրաւական ներկայացնելով իր տուն վեր առնել գումարը և չահեցնել 12 տոկոս, իսկ հակառակ դէպքում պահանջել պ. ձանձապահից գրաւական և հաչել տոկոս նոյնքան որքան ինքն յանձն է առնում։

Այսպիսի մի յայտարարութիւն, 'ի հարկէ, քիչ մտածութեան առարկայ չի դառնայ պ. ձանձապահին, որովհետև այլ ևս նրա ազգասիրութիւնը? ոչ չահուելու է և ոչ էլ պիտի չահեցնի։ Ինչպէս ասացինք հոգաբարձական ժողովը կայացել էր փետրվարի 5-ին. հոգաբարձուների օրինաւոր թիւը ներկայ էին, խօսակցութեան առարկայ էր պ. ձանձապահը և նրա հաչիները, ամենը համակրում էին պ. հոգաբարձուի (յայտարարութիւն ներկայացնող) յայտնած մտքերին։

Թող ընթերցողը ինքն երևակայի այն դրութիւնը, որի մէջ գտանվում էր նոյն րոպէին պ. ձանձապահը։ Արդարև բաւականին դժուարին գործ. տասը տարի ունենալ իշխողութիւն մի գումարի վրա և համարեա թէ սեփականացնել յաջողացրած, այժմ յետ են պահանջում։ Երբ բոլոր ներկայ եղող հոգաբարձուներն դիմեցին պ. ձանձապահին—հարցնելով թէ ինչ ունի ասելու, նա զոդողջուն ձեռքով գրպանից հանելով կանոնաւոր պատրաստած 700 բուբլին, որը կամ մեկնում էր հոգաբարձուներին և կամ էլի յետ դնում գրպանը ասելով, «ես ձեզ երբէք փող չեմ տայ, աւելի չուտ բոլորովին կը կորցնեմ քան թէ սահմանած տոկոսից աւելի վճարել և գրաւական ներկայացնել կը յօժարեմ և ես ձեզ չեմ ճանաչում, ինձ ընտրել է ժողովուրդը և հաստատել Կաթողիկոսը, ուրեմն զոյք իրաւունք չունէք ինձանից ոչ հաչիւ և ոչ փող ուզելու։»

Այս ասելով սաստիկ յուզված դուրս եկաւ դահլիճից։

Ահա մի գեղեցիկ օրինակ մեր միւս քաղաքների հոգաբարձուների (թէ չասենք հոգեբարձուների). պ. ձանձապահ, լաւ լսիր և ականջումդ պահիր, երբ հոգաբարձուների նոր ընտրութեան ժամանակը կը գայ, դու այնպիսիներ զլխիր և ցերեկ չը քքնել, միայն թէ մնաս միշտ նոյն պաշտօնի մէջ, եթէ ոչ տունդ կը քանդուի, իսկ հակառակ դէպքում թէ չը յաջողվեց անփոփոխ մնալ պաշտօնիդ մէջ, այն ժամանակ երբ հաչիւ կուզեն կամ փող, առանց ամօթ քաշելու և կարմրելու պատասխանիր. «Դուք իրաւունք չունիք, ես ձեզ չեմ ճանաչում և հաչիւ էլ չեմ տայ, որովհետև ինձ ընտրել է ժողովուրդը և հաստատել Կաթողիկոսը»։

Ղ. ուրեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ներսիսեան Հայոց Ազգային-Հոգևոր զպրոցում հոգաբարձական խորհրդարանի մէջ ապրիլ ամսի 9-ին 1880 ամի, երեկոյեան 8 ժամին, կը լինի ճաշուրդ (առանց կրկնաձրդի) կապալով տալու նոյն զպրոցի կալուածքը (ընծայած հանգուցեալ Աւետիք փիրոյեանցից) որ գտանվում է Սօլդատսկի անուանուած փողոցում։ Պայմանթուղթը կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակէից և տօներից, առաւօտեան 10—12 ժամն։

—

Ներսիսեան Հայոց Ազգային-Հոգևոր զպրոցում, հոգաբարձական խորհրդարանի մէջ, ապրիլ ամսոյ 19-ին 1880 ամի, երեկոյեան 8 ժամին կը լինի ճաշուրդ (առանց կրկնաձրդի) կապալով տալու Թէլէթի սուրբ Գէորգայ ուխտատեղւոյ գաւթումը գտնված մի կրպակ իր մի սենեակով։ Պայմանթուղթը կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակէից և տօներից, առաւօտեան 10—12 ժամն։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻ մեր մշտական թղթակից պ. Գ. Նիկողոսեան գրում է մեզ։ «Անցեալ կիրակի, մարտի 16-ին, սրբազան Սագինեանցի քարոզից յետոյ, վանի սովելոց համար, նուիրատուներից շատերը, ինչպէս ասում են, սխալմամբ թղթադրամ և ոսկիներ գցել էին այն թարախի մէջ, որ մանածելու է եղել քահանաներից մէկը եկեղեցու պաշտօնեաների օգտին, ինչպէս որ անում են իւրաքանչիւր կիրակի։ Լսելով յետոյ, թէև շատ ուշ, քահանայի արած խարդախութեան մասին, վրդովված նուիրատու մարդկանցից և կանանցից շատերը եկել էին, ասում են, սրբազան Սագինեանցի մօտ, որպէս զի յետ պահանջեն իրանց նուիրած զրամները։ Այս առիթով քանի օր է արդէն քննութիւն է կատարվում անխիղճ քահանայի վրա, գտնել ժողովրդի մէջ տարածված յուզմունքը հանդարտացնելու համար։ Ամենքը զայրոյթով հարցնում են՝ եթէ մեր աչքի առջև այսպիսի բաներ են կատարվում, ուրեմն ինչ կը լինի գիւղերում, որտեղ, ժողովուրդը անպայման կերպով հաւատում է ժողովարար քահանային և տալիս է նրան ինչ ունէ իր սովեալ եղբայրների համար։ Մայրերից մի քանիսը յետ առնելով իրանց ոսկիները, անօրինել են ուղարկել խմբագրութիւններից մէնին, Թիւրքիայի հայ սովելոց հացնելու համար։»

—

Ստացանք Թիֆլիսարնակ պ. Արշակ Ս. Թէրզանեանից 1 բուբլ յօգուտ վանի սովատանջների։

—

Ստացանք սղնախեցի Գրիգոր Արտեմիչ Տէր-Աւակովից 4 բուբլ յօգուտ վանի սովալուկների։

—

Գրեթէ ամեն օր ներկայանում են «Մշակի» խմբագրատուն զանազան չքաւոր հայ գաղթականներ, գլխաւորապէս Վանի կողմերից, երևի լսած լինելով որ մենք ժողովում ենք փողեր յօգուտ սովելոց։ Մեզ անհարմար է այստեղ փողեր բաժանել և բոլորը, ինչ որ հայոց հաւարակութիւնը մեր ձեռքով նուիրում է յօգուտ Թիւրքիայի հայ սովելոց, պարտաւոր ենք, մինչև վերջին կօպէկը, հասցնել Կ. Պոլսի կենտրոնական յանձնաժողովին։ Մեզ ոչ ոք, 'ի հարկէ, իրաւունք չէ տուել, Թիֆլիսում գտնված Վանի գաղթականներին փողերը բաժանելու, իսկ այդ պաշտօնը, մեր կարծիքով, կարող էր յանձն առնել հայ գաղթականների համար հիմնված մանաժողովը, որ դեռ շարունակում է իր գոյութիւնը և որի հետ միացան Թիֆլիսի այն տիկինները, որոնք այժմ փող են ժողովում յօգուտ Վանի սովատանջների։

—

Ցեղական ռուս լրագիրները լսել են, որ Թիֆլիսի Դուման վճռել է լայնացնել երկու սաժէնով այն փողոցը, որ անցնում է Սիոնի մայր-եկեղեցու առջև, որտեղ Նորերումս այրվեցաւ Անանովի քարվանսարան։

—

Երևանի «Պսակ» լրագիրը հաղորդում է որ փետրվարի 28-ին ռուս թատրոնասէրների մի խումբ տուեց սուրբ Դայիանեան օր. զպրոցի դահլիճում մի ներկայացումն Երևանի Պրոգիմնազիայի չքաւոր աշակերտների համար։ Լրագիրը ասում է որ ներկայացումն շատ աջող անցաւ։

—

Ս. Պետերբուրգում հրատարակվող «Разсвѣтъ» շաբաթագիրը, որ ռուսաց հրէաների օրգան է, տպել է Նորերումս մի համակրական առաջնորդող յօդուած հայերի և «Մշակի» վերաբերութեամբ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Ֆրանսիական կառավարութիւնը աշխատում է դուրս դալ այն դժուար դրութենից, որի մէջ նա գտնվում է մինիստր Ֆերրիի օրէնքի 7-դ յօդուածի սենատից չընդունվելու պատճառով։ Ինչպէս երևում է Փարիզից ստացված լուրերից Ֆրէյսինէի մինիստրութիւնը մերժված յօդուածը նորից չի խմբագրի և չի խառնվի այդ օրէնքի առիթով պատգամաւորների ժողովում լինելու երկրորդ քննութեան մէջ։ Հանրապետութեան սահմանադրութիւնը պահանջում է այդ քննութիւնը։ Երբ Ֆրանսիական սենատը փոփոխութիւններով հաստատում է պատգամաւորների ժողովից ընդունված որ և է օրէնքի նախագիծ, այդ դէպքում նախագիծը յանձնվում է պատգամաւորների ժողովին երկրորդ քննութեան համար։ Պատգամաւորների ժողովը կամ հաստատում է փոփոխված նախագիծը, կամ նրան մերժում է։ Այս վերջին դէպքում հարցը յետաձգվում է վեց ամսով և այդ ժամանակամիջոցի ընթացքում հարցը նորից չէ կարելի բարձրացնել։

Այժմեան մինիստրութիւնը ցանկանում է, որ պատգամաւորների ժողովը հաստատէ նակութեան մասին, մենք նպատակ չունենք կրկնել այն մտքերը, որ իր ժամանակին յայտնեց «Մշակը», թէ ինչ հոգեկան և մտաւոր սնունդ կարող են տալ մեր հասարակութեանը այդ ֆրանսիական խոհանոցի արդիւնքներն, և թէ ինչ նշանակութիւն ունեն մեր հասարակութեան համար մեր իսկական կեանքից առնված պիեսաները։ Բայց մենք չենք կարող ուշադրութիւն չը դարձնել պ. Ա. Յովհաննիսեանցի մի բացատրութեան վրա, որ բեպերտուարի վերաբերութեամբ յայտնել էր նա մարտ 6-ի ընդ. ժողովի մէջ։ Պարոնը ասում է. «Պէտք է գիտենալ, որ Պօլսից եկած դերասանները բերել էին իրանց հետ որոշեալ պիեսաներ (200 բուբլով գնված) որոնց մէջ նրանք առաջուց մանակցել էին, ուստի չէր կարելի միանգամից նրանց նոր դերեր տալ և նոր բեպերտուար կազմել։ Այդ խօսքերով արդարացնում է իրան պ. Յովհաննիսեանցին, որ յանձն էր առել թատրոնի բեպերտուարը հարստացնելու և նրան ուղղութիւն տալու պարտաւորութիւնը։ Այդ խօսքերը այն աստիճան տրէշաւոր սոֆիզմներ են, որ մի մարդ թոյլ կը տայ իրան խօսել այն ժամանակ միայն, երբ կամ ինքը ոչինչ չէ հասկանում, և կամ իր լսողներին յիմարի տեղ է դնում։—թատրոնական մանաժողովը անյարմար է համարում նոր բեպերտուար կազմել և բաւականանում է պօլսեցիների բերած պիեսաներով, այն պատճառով միայն, որ պօլսեցի դերասանները (3 հոգի) այդ պիեսաների մէջ չաս անգամ խաղացել էին, վարժվել էին և անծանօթ պիեսաներ տալը կը դժուարացնէր նրանց խաղը....Ուրեմն, մանաժողովը իր բեպերտուարը յարմարեցնում է 3 պօլսեցիների ճաշակին և նրանց հեշտութիւններին, բոլորովին զանց առնելով ամբողջ դերասանական խումբի յարմարութիւնները, որոնք Պօլսում չեն եղել, որոնք յիշեալ պիեսաների մէջ չեն խաղացել, չեն վարժվել, և պիեսաների լեզուն անգամ անծանօթ է նրանց։ Մանաժողովը դերասանների մեծամասնութեան ընդունակութիւնները զոհում է փոքրամասնութեան, պօլսեցիների դիւրութիւններին. այլ ևս չենք խօսում այն բարելենեան լեզուախառնութեան մասին, որ մի ամբողջ սեզոնի ընթացքում զզուեցրեց մեր հասարակութեանը։

Անցնենք կրկին ծախքերի քննութեանը։

228 բուբլով գնած ողորմելի բեպերտուարի արտագրութեան համար ծախսված է 502 բ. 70 կ. (պոչը մարմնից երկար է...)։ Մենք հաստատ աղբիւրներից լսել ենք, որ միայն 200 բ. է ծախսվել արտագրութեան համար և ոչ աւելի։

Դերասաններին և դերասանուհիներին ռոճիկ է վճարված 6345 բ.։ Մեր կարծիքով, և որպէս ոմանք յայտնեցին, աւելի լաւ կը լինէր, որ դերասաններին փոխանակ ռոճիկ տալու, մանաժողովը իւրաքանչիւրի արժանաւորութեանը համեմատ մի մաս նշանակէր իր ստացած մուտքից։ Բայց եթէ ռոճիկ էր տալիս, գոնէ անաչառ լինէր, և ոչ թէ չափազանցութիւնների մէջ ընկնելով, պօլսեցիներին առատօրէն վճարէր, իսկ տեղացիներին սակաւ։

Պ. Պալմը ստացել է թատրոնի վարձ 30 ներկայացման համար 6000 *)։ Դա ծախքերի ամենահետաքրքիր կէտն է, որի մասին մենք մի փոքր երկար պիտի խօսենք։

Այդ 6000 բուբլին այնպիսի մի զգալի կորուստ է, որի պատճառը պէտք է համարել ոչ այլ ինչ, բայց միայն մանաժողովի կրքերից, ինարիգանեանից և կապրիզից առաջ եկած մի ինքնահաճ կամայականութիւն։ Կապրիզի համար վատնել հասարակութեան արծաթը,—դա աններելի յանցանք է։

Մեր ընթերցողներին յայտնի է հայոց թատրոնի համար մի մշտական խումբ կազմելու և կանոնաւոր ներկայացումներ տալու պատմութիւնը։ Արծրունի եղբայրները կառուցին մի թատրոնական շէնք, յետոյ ստորագրութիւն բացվեցաւ, և թատրոնի գոյութիւնը պահպանելու համար նուիրատուութիւններ հաւաքվեցան, որի գումարը հասնում էր 6735 բուբլու։ Որքան յիշում ենք, նուիրատուութիւնների անուանական ցուցակի ճակատին գրված էր, որ այդ գումարը հաւաքվում է Արծրունու թատրոնում ներկայացումներ տալու համար և ոչ այլ տեղ, և նուիրատուները կամ թատրոնի հիմնադիրները նոյն մտքով էին զոհում իրանց արծաթը։ Այդ որոշումը կրկին հաստատեցին հիմնադիրները իրանց անցեալ տարվայ ընդ. ժողովի մէջ, և արձանագրվեցաւ նոյն ժողովի պրոտոկոլի մէջ, որով ընտրված մանաժողովը պարտաւորվում էր վարձել Արծրունու թատրոնը հայոց ներկայացումների համար։ Բայց մանաժողովը իր պաշտօնի գլուխը անցնելէն յետոյ, հակառակ ընդ. ժողովի կարգադրութեանը, և հակառակ իր ստացած հրահանգներին, թողց Արծրունու թատրոնը և վարձեց Պալմից ամառնային թատրոնը։ Մանաժողովը այդ զեղծումը ինքը ևս խոստովանվում է մարտ 6-ի ընդ. ժողովի մէջ, թէ ինքը հակառակ վարվեցաւ հիմնադիրների որոշմանը։ Այժմ տեսնենք, թէ ինչ շահվեցաւ մանաժողովը այդ վարմունքից, քանի որ Արծրունին իր թատրոնը բոլորովին ձրի էր տալիս, մինչդեռ Պալմին պէտք էր վճարել իւրաքանչիւր ներկայացման համար 200 բուբլի։

Մանաժողովը մարտ 6-ի ընդ. ժողովի մէջ իր այդ վարմունքը արդարացնում է նրանով, որ Արծրունու թատրոնը փոքր էր, կարասիք և դէկորացիաներ չունէր (*), և փոքրութեան պատճառով կարող էր տալ ամենաբարձր մուտք սովորական գներով 416 բ. միայն (սովորական գներով Արծրունու թատրոնը տալիս է 437 բ., իսկ բենեֆիսի գներով 556 բ.,)—մինչդեռ ամառնային թատրոնը աւելի մեծ լինելով, կարողացաւ մանաժողովը 30 ներկայացման համար մուտք ստանալ 14,474 բ.։

Ցիշեալ պատճառաբանութիւններով կամ մանաժողովը ինքը սխալվել է իր հաչիւների մէջ, և կամ իրան արդարացնելու համար, աշխատում է յիմարացնել հասարակութիւնը և նրան մոլորութեան մէջ ձգել։

Մի հասարակ մաթեմատիկական հաչիւ կը պարզէ բոլորը։ Համեմատենք Արծրունու թատրոնի մուտքը ամառնային թատրոնի մուտքերի հետ։

Մանաժողովը ամառնային թատրոնում 30 ներկայացումից ստացել է մուտք 14,474 բ., այդ գումարից վճարել է Պալմին թատրոնի վարձ 6000 բ., ուրեմն մնում է զուտ արդիւնք միայն 8474 բ.։ Այժմ բաժանենք այդ 8474 բուբլին 30 ներկայացման վրա, որպէս զի տեսնենք, իւրաքանչիւր ներկայացումը մինչև թւով որքան արդիւնք է տուել։ 8474 թիւը բաժանելով 30-ի վրա, կը ստանանք 282 բ. 56½ կ.։ Կը նշանակէ, մանաժողովը ամառնային թատրոնում ստացել է ամեն-մի ներկայացումից աւելի պակաս արդիւնք, քան թէ կարող էր տալ Արծրունու թատրոնը, որովհետև այդ վերջինը տալիս է 437 բ., իսկ ամառնային

*) Պալմի բենեֆիսի առիթով նրան ընծայած մօտ 300 բուբլու պարգևների արժէքը հաչիւների մէջ չէ երևում, երևի, մի ուրիշ տեղ ամփոփել են աչքի չը զարկելու համար։

*) Մինչև հայոց ներկայացումների սկսվելը Արծրունու թատրոնի թէ կարասիքը և թէ դէկորացիաները արդէն պատրաստ էին։